աւագ եկեղեցին շինուած է 1521 թուին, կառուցանողն է նշանաւոր Խանչիկ Հանգօ։ Ամենօրեայ ժամերգութիւնը այդտեղ է կատարւում։ Եկեղեցու շուրջը կան 16 և 17 դարերի գերեզմաններ, որոնց տապանագրերը անընթեռնելի են։ Եկեղեցու աջ կողմն է խորհրդարանը, իսկ դրան հանդէպ Լուսաւորչեան վարժարանը շինուած 1824 Փրկչի և 1273 հայոց թուականին։ Այս տարեշրջանին երկու սեռի աշակերտների թիւն էր 23. չհաշուելով օտար դպրոցներում սովորողներին, որոնք հայերէն և կրօն մեր դպրոցումն են սովորում։

Սուչավայում առաջ 700 հայ է եղել այժմ 41 ընտանիք կայ։ Կարծւում է, որ հայերը Սուչավա գաղթել են 13-րդ դարում. և հինգ եկեղեցիների գոյութիւնը ապացոյց է, որ հայերը այստեղ բազմաթիւ են եղել։

Կարևոր է համարւում Ռումանիայի հայերի համար էլ առաջնորդութիւն հաստատել։ Հայերի հոգևորական վիճակը շատ անմխիթար է։

ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Հայ-կաթոլիկ եկեղեցի յանձնուած լեհացիներին.—

Թէոդոսիայի հայ—կաթոլիկական եկեղեցին յանձնուած է լեհ—կաթոլիկներին։ Այս առիթով Թէոդոսիայի հայ կաթոլիկ համայնքը սաստիկ վրդովուած է։ Ռուսաստանի հայ—կաթոլիկների առաքելական կառավարիչ Հ. Սարգիս վարդապետը աշխատում է վերահաստատել հայ կաթոլիկների իրաւունքը խլուած եկեղեցու վերաբերութեամբ։

Հայ-Հռոմէականների ժողով Հռոմում.

Բիւզանդիոնը (հոկտ. 3) գրում է, թէ հայ-հռոմէական եպիսկոպոսներից չորսը որ Հռոմ պէտք է գնային, արգելուեցին Կ. Պոլսում։ Ժողովրդի և ընդհանուր ժողովի կողմից դրանց դիմումներ են լինում և բացատրութիւններ տրւում Թէրզեանի հակազգային արարքների մա-

սին։ Խաչատուրեան և Խապայէլեան եպիսկոպոսները այն կուսակցութեան են յարուած, թէ պէտք է գնալ Հռոմ ներկայ կացութեանը դարման խորհելու համար, վստահեցնելով, թէ իրանք Թէրզեանի ձեռքին խաղալիք չեն լինի։ Միւս կողմից լսում է, որ Թէրզեանի հրաժարեցման վերաբերեալ հանրագրութիւնը կառավարական այլ և այլ ատեանների մէջ գործադրութեան է դրուած։

*** Կառավարութիւնը թեզքէրէ մը ուղղելով Հայ-հռոմէականաց Պատրիարքարանը, կ'արգիլէ Թրքահայ եպիսկոպոսներուն Սինոդ գումարել Հռոմի մէջ, մինչեւ որ հաստատուի եւ բացատրուի այդ հաւաքման բուն նպատակը. կը դիտուի միւս կողմէ որ Հայ-հռոմէականաց Ընդհ. Ժողովը Պատրիարքը դադրեցուցած ըլլալով իր պաշտօնէն, Թէրզեան արդէն իրաւասութիւն չունի Սինոդ գումարելու։ (Տաճար)։

—Церк. Вѣст. (№ 41) գրում է.

«Ինչպէս հաղորդում է «Corriere della Sera» Հռոմում, հոկտեմբերի 15-ին (Ն. տ.) Բացուեց հայ կաթոլիկ եպիսկոպոսների ժողովը։ Ներկայ են լինում 15 եպիսկոպոսներ և Մխիթարեանների երկու մեծաւորները։

Ժողովը տեղի է ունենում Պիոս Ժ. ի կարգադրութեամբ, եկեղեցական վարչական խնդիրները քննելու համար, ի մասնաւորի՝ պատրիարքի և եպիսկոպոսների իրաւունքների մասին, Հայ կաթոլիկների մէջ նորերում ծագած լուրջ չփոթութիւնների առիթով։ Ազգային ժողովը, որ կազմուած է համարեա միայն աշխարհականներից, եկեղեցական սահմանադրութեան մի ծրագիր է մշակել, որով օրէնսդրական իրաւունքը պէտքէ անցնի ազգային ժողովին, իսկ պատրիարքին ու եպիսկոպոսներին մնում էր միայն կատարողի պարտքը։

Պատրիարքը մերժեց այդ ծրագիրը և արձակեց ժողովը։ Սակայն ժողովը հրաժարուեց հնազանդել այդ կարգադրութեանը։ Հռոմեայ «Romae l'Oriente» օրագիրը, որ յայտնի է Սաքսոնիայի արքից Մաքսի յօդուածի պատմութեամբ, ջանք է անում շահագործել ժողովի սինոդական գումարումը ներկայացնելով այն որպէս պապի

առանձին իմն հայրական հոգածութեան ապացոյց կաթոլիկութեան յարածների մասին. Ժողովը պէտք էր, որպէս թէ, հրապուրէր դէպի պապը Հռոմից անջատուած արևելեան եկեղեցիները մանաւանդ յունականը. Դարձը վարձատրելու համար առատ խոստումն է անում, այն է. յոյները կը վերստանան հին փառքը, իրանց իրաւունքները, իրանց ազատութիւնը.

Թերզեանի հրաժարեցումն.

ՀԱՅ-ՀՌՈՄԷԱԿԱՆ ԸՆԴՀ. *Ժողովը անցեալ շաբթու լիագումար նիստի մը մէջ միաձայնութեամբ հրաժարեցուց Թէրզեան Պատրիարքը, այն եզրակացութեան գալով թէ քանի որ անիկա ոչ միայն նոր կանոնագիրը ազգին զգացման համապատասխան կերպով կազմելու կողմը չէ, այլ եւ արդէն գոյութիւն ունեցող կանոնագիրը չի ճանչնար, եւ փոխանորդ ու գործակատար կանուանէ ուղղակի՝ արհամարելով ամէն կանոն եւ պատշաճութիւն, իրաւունք չունի Ազգին ներկայացուցիչն ըլլալու։*

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻ

ՊՐԱՒՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ

(Церк. Вѣст. № 40.)

Սիբիրի համար քահանայացուների պատրաստութիւն.

Եկեղեցական դպրոցների ուսուցիչներից Սիբիրի թեմերի ազգաբնակութեան համար քահանայացուներ պատրաստելու դասընթացքները, որ բացուած էին Սրբ. Սինոդի 1909 *թուի օգոստոսի* 5—12 *որոշմամբ, նոյն Սինոդը որոշել է մի տարի եւս շարունակել նոր ընթացաւարտներ եւս տալու համար, պայմանով, որ դասընթացքը լինի միամեայ.*

Եկեղ. ծխ. դպրոցների ուսուցիչների համար առողջապահական բնակավայր Խրիմում.

1909 *թուին եկեղեց. ծխ. դպրոցների* 25-*ամեակի առիթով, ի յիշատակ ի Տէր հանգուցեալ Թագաւոր կայսր*